ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» հունվարի 2023 թ. N 73-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետության «Աբադ Ռահան Փարս Ինթերնեյշնլ Գրուփ» փակ բաժնետիրական ընկերությանը «Ագարակից Վարդանիձոր մոտ 21 կմ ճանապարհի հիմնանորոգում, Վարդանիձորից մինչև թունելի ելք մոտ 11 կմ ճանապարհի կառուցում (Տրանշ 4)» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Տրանսպորտային» ենթատեսակի համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2029 թվականի մարտի 31-ը:

3. Տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետության «Թուննել Սադդ Արիանա» փակ բաժնետիրական ընկերությանը «Ագարակից Վարդանիձոր մոտ 21 կմ ճանապարհի հիմնանորոգում, Վարդանիձորից մինչև թունելի ելք մոտ 11 կմ ճանապարհի կառուցում (Տրանշ 4)» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Տրանսպորտային» ենթատեսակի համար:

4. 3-րդ կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2029 թվականի մարտի 31-ը:

5. Տրամադրել Խորվաթիայի Հանրապետության «Ինստիտուտ ԻԳԽ» բաժնետիրական ընկերությանը «Ագարակից մինչև թունելի ելք մոտ 32 կմ ճանապարհի շինարարական հսկողություն (Տրանշ 4)» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն» գործունեության տեսակի «Տրանսպորտային» ենթատեսակի համար:

6. 5-րդ կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2029 թվականի մարտի 31-ը:

7. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

10/30/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ